

Luys Lnyju®



ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ
ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Proj

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ	2
3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	7
4. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՍԿԵՐԸ	12
5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ	13
6. ԱՄՓՈՓՈՒՄ	14

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կառավարությունը յուրաքանչյուր տարի կազմում և հաստատում է առաջիկա երեք տարիների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ կամ ՄԺԾ ծրագիր կամ Ծրագիր), որը հաստատվելուց հետո ուղարկվում է Ազգային ժողով և հրապարակվում: Այն կառավարության՝ առաջիկա երեք տարիների հարկաբյուջետային և ծախսային քաղաքականությունների հիմնական ուղղությունները, նպատակները և սկզբունքներն արտացոլող կարևոր փաստաթուղթ է: Ավելին, ՄԺԾԾ-ի՝ առաջին տարվան առնչվող մասը կարելի է համարել հաջորդ տարվա պետական բյուջեի նախնական նախագիծ: Բացի այդ, այն կարևորվում է նաև տնտեսության զարգացումների վերաբերյալ կառավարության սպասումների մասին պատկերացում կազմելու տեսանկյունից:

2025-2027թթ. ՄԺԾԾ-ն կազմվել է ՀՀ տնտեսության վրա արտաքին գործոնների բարենպաստ ազդեցության զգալի չափով թուլացման պայմաններում: Հարկ է նշել, որ արտաքին շուկերը, որոնք վերջին 2-2.5 տարիներին, ընդհանուր առմամբ, դրականորեն են ազդել ՀՀ տնտեսության վրա, այնուամենայնիվ, էականորեն փոխել են դրա կառուցվածքը և զարգացման հեռանկարները: Այդ երկակի ազդեցությունը մեծապես պետք է արտացոլված լինի ՄԺԾԾ փաստաթղթում: Բացի այդ, դրանում պետք է հստակ նշված լինեն նաև կառավարության ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար կանխատեսվող ռեսուրսները՝ առաջիկա տարիներին պետական բյուջեով ֆինանսավորում ստանալու նպատակով:

Հաշվի առնելով փաստաթղթի կարևորությունը՝ «Լույս» հիմնադրամը յուրաքանչյուր եռամյա ՄԺԾԾ-ի վերաբերյալ հրապարակում է վերլուծություն¹:

2025-2027թթ. ՄԺԾԾ-ի վերլուծության սկզբում ներկայացված են Ծրագրի հիմքում ընկած մակրոտնտեսական կանխատեսումները: Այնուհետև վերլուծվել է առաջիկա երեք տարիների համար պլանավորվող հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները և կանխատեսվող հարկաբյուջետային շրջանակը՝ ներառյալ պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը: Հաջորդիվ ներկայացված են 2025-2027թթ. ՄԺԾԾ փաստաթղթում ներառվող մակրոտնտեսական և հարկաբյուջետային ռիսկերը, թիրախների ապահովումը: Վերջում ամփոփված են կարևոր արդյունքներն ու եզրահանգումները:

¹ «Լույս» հիմնադրամի՝ ՄԺԾԾ-ի վերաբերյալ նախորդ վերլուծություններին կարելի է ծանոթանալ այստեղ՝ <https://www.luys.am/...>:

2. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

2020 թվականի տնտեսական անկումից հետո 2021-2023 թվականներին տնտեսությունը թևակոխել է վերականգնման և աճի փուլ՝ միջինում գրանցելով տարեկան 9.0% իրական աճ: **ՄԺԾ ծրագրում նշվում է, որ դա մեծապես պայմանավորված է եղել մի շարք արտաժին գործոններով, որոնց ազդեցությունն առաջիկա տարիներին կչեզոքանա:** Մասնավորապես, ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով, 2022 թվականի փետրվարի վերջից արձանագրվել է դեպի Հայաստան մարդկանց և կապիտալի կտրուկ ներհոսք, զբոսաշրջության զգալի ավելացում, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխում, ՀՀ-ից դեպի ՌԴ արտահանման պահանջարկի ավելացում, գրանցվել են պետական բյուջեից կապիտալ ծախսերի և բնակարանաշինության բարձր աճեր, արցախահայության բռնի տեղահանությունն ավելացրել է ՀՀ ներքին պահանջարկը, ինչպես նաև անդրադարձել է աշխատանքի շուկայի իրավիճակի վրա, 2023 թվականի նոյեմբերից սկսած գրանցվել է ոսկերչական արտադրատեսակների արտադրության կտրուկ աճ և այլն:

Տնտեսական աճի՝ նախորդ երկու տարիներին արձանագրված բարձր տեմպերը շարունակվել են նաև 2024 թվականի առաջին եռամսյակում, որի ընթացքում գրանցվել է իրական ՀՆԱ-ի 9.2% աճ՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների և արդյունաբերության աճով (նպաստումները՝ համապատասխանաբար 4.6 և 3.9 տոկոսային կետ):

Համաձայն ՄԺԾ ծրագրի՝ 2024 թվականի համար սպասվում է շուրջ 6.3%, իսկ միջնաժամկետում կանխատեսվում է միջինում 5.7% տնտեսական աճ: Նշվում է, որ այս պայմաններում կապահովվի ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով այդ ժամանակահատվածի համար ծրագրված միջինում առնվազն տարեկան 7% տնտեսական աճը: Նկատի ունենալով, որ 2021-2023 թվականների ընթացքում արդեն իսկ արձանագրվել է իրական ՀՆԱ-ի տարեկան միջին հաշվով 9.0% աճի տեմպ (ընդ որում՝ միայն 2022-2023 թվականների ընթացքում արտաժին բարենպաստ գործոնների շնորհիվ 2021 թվականի համեմատ գումարային աճը կազմել է 22.4%), ստացվում է, որ հետագա տարիներին նույնիսկ տնտեսական աճի ներուժից ցածր տեմպի դեպքում, միևնույն է, կապահովվի վերոհիշյալ «միջինում առնվազն 7% տնտեսական աճը»: Մինչդեռ տեսականորեն հնարավոր է այնպիսի իրավիճակ, որ առաջիկա տարիներից մեկի կամ երկուսի բարձր աճի տեմպերի արդյունքում ապահովվի կառավարության միջինացված թիրախը, սակայն մնացած տարիներին տնտեսությունում լրջագույն խնդիրների առկայության պարագայում արձանագրվի տնտեսական անկում կամ առնվազն ներուժից ցածր տնտեսական

աճի տեմպ: Ուստի, ՄԺԾ ծրագրի շրջանակներում կատարվող մակրոտնտեսական զարգացումների գրեթե բոլոր վերլուծություններում փաստացի տնտեսական աճի միջինացված տարեկան մեծությունը, բացի դրա թիրախային ցուցանիշից, պետք է համեմատվի նաև տնտեսական աճի ներուժի հետ:

Համաձայն Ծրագրի՝ միջնաժամկետում տնտեսության բոլոր ոլորտներում աճ է նախատեսվում: Մասնավորապես, ակնկալվում է, որ ծառայությունները կաճեն միջինում 6.1%-ով, արդյունաբերությունը՝ 4.9, շինարարությունը՝ 5.9, իսկ գյուղատնտեսությունը՝ 3.0%-ով:

Աղյուսակ 1. 2025-2027թթ. ՄԺԾ հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2021	2022	2023	2024	2025	2026	2027
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր	կանխ.	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6,991.8	8,501.4	9,505.2	10,235.4	11,197.2	12,308.9	13,505.3
Տնտեսական աճ, %	5.8	12.6	8.7	6.3	5.8	5.7	5.5
ՀՆԱ դեֆլատորի աճ, %	6.9	8.0	2.9	1.3	3.4	4.0	4.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), %	7.7	8.3	-0.6	3.0	4.0	4.0	4.0
Գնաճ (միջին), %	7.2	8.6	2.0	0.7	3.5	4.0	4.0
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %							
Արդյունաբերություն	2.4	6.9	0.0	6.8	5.8	4.5	4.5
Գյուղատնտեսություն	-0.8	-2.8	2.9	2.7	3.0	3.0	3.0
Շինարարություն	3.1	18.6	16.0	6.6	6.3	5.9	5.5
Ծառայություններ	8.6	18.4	11.5	6.6	6.1	6.3	6.1
Զուտ հարկեր	7.4	8.1	11.0	6.7	6.2	6.1	5.8
ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %							
Վերջնական սպառում	1.3	4.4	9.7	6.6	4.4	5.9	5.4
Պեպրական	-6.2	-2.2	28.3	10.6	-1.3	7.6	7.2
Մասնավոր	2.8	5.6	6.5	5.8	5.7	5.5	5.0
Հիմնական միջոցներում ներդրումներ ²	23.6	14.0	10.1	13.6	6.2	11.4	4.3
Պեպրական	33.9	17.9	24.4	53.1	2.5	31.1	-5.5
Մասնավոր	22.3	13.5	8.1	7.2	7.1	7.0	7.0
Արտահանում	18.6	59.3	29.5	7.0	-15.9	-0.7	3.1
Ներմուծում	12.9	34.5	29.7	10.0	-13.3	2.7	4.8
Արտաքին հատված (ՀՆԱ-ի նկատմամբ %)							
Ընթացիկ հաշիվ	-3.5	0.3	-2.3	-3.2	-3.5	-4.6	-5.1

² Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն, այլ կերպ ասած՝ դրա մեջ ներառվում են նաև վիճակագրական սխալները:

Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-8.0	-0.7	-0.8	-2.3	-3.4	-4.7	-5.3
Արտահանում	36.1	51.7	59.0	59.7	47.3	44.2	42.9
Ներմուծում	44.1	52.4	59.8	62.0	50.8	48.9	48.1
Դրամական փոխանցումներ	9.2	7.4	4.0	4.1	4.0	4.0	3.9

Սպասվում է, որ 2024 թվականին վերջնական սպառումը կաճի 6.6%-ով, իսկ ներդրումները՝ 13.6%-ով: Միջնաժամկետում դրանց աճը կկազմի համապատասխանաբար 5.2% և 7.3%:

2024 թվականի առաջին հինգ ամիսներին ապրանքների գծով արտաքին առևտրի մնացորդը նախորդ տարվա նկատմամբ վատթարացել է՝ պայմանավորված ներմուծման մեծ ծավալներով: Նշված ժամանակահատվածում ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նվազել է, իսկ ՀՀ-ից մեկնած զբոսաշրջիկների թվաքանակը աճել՝ բացասաբար անդրադառնալով ծառայությունների հաշվեկշռի վրա:

Սպասվում է, որ 2024 թվականին արտահանումը և ներմուծումը, ներքին պահանջարկի և տնտեսական ակտիվության աճով, ինչպես նաև այլ երկրներից զբոսաշրջության աճով և վերաարտահանման գործոնով պայմանավորված, կաճեն համապատասխանաբար 7.0 և 10.0%-ով: Ինչպես արդեն նշվեց, ՄԺԾ ծրագրով նույնպես մեծ է համարվում ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով 2022-2023 թվականներին առաջացած դրական գործոնների աստիճանական թուլացման հավանականությունը: Մասնավորապես, Ծրագրով ակնկալվում է, որ այդ թուլացման հետևանքով վերաարտահանման ծավալների նվազումը 2025 թվականին կհանգեցնի արտահանման՝ 15.9 և ներմուծման՝ 13.3%-ով նվազման: Իսկ 2026-2027 թվականներին արտահանումն ու ներմուծումը կաճեն միջինում 1.2% և 3.7%-ով:

2023 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ վատթարացել է՝ կազմելով ՀՆԱ-ի 2.3%-ը: Վատթարացումը հիմնականում պայմանավորված է դրամական փոխանցումների (հատկապես՝ ՌԴ-ից) նվազմամբ, ինչպես նաև առևտրային հաշվեկշռի վատթարացմամբ: 2023 թվականին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված առևտրային և ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների զուտ ներհոսքը նվազել է շուրջ 32.4%-ով՝ պայմանավորված ինչպես ներհոսքի նվազմամբ (հատկապես՝ ՌԴ-ից), այնպես էլ դեպի այլ երկրներ արտահոսքի ավելացմամբ:


2025-2027թթ. ՄԺԾ ծրագրով ակնկալվում է, որ 2024թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կշարունակի վատթարանալ՝ հասնելով ՀՆԱ-ի 3.2%-ին (պայմանավորված առևտրային հաշվեկշռի վատթարացմամբ, ինչպես նաև ընթացիկ հաշվին ծառայությունների հաշվեկշռի դրական նպաստման որոշակի նվազմամբ): **Նշվում է, որ միջնաժամկետում, 2022-2023թթ. առաջացած դրական գործոնների ազդեցության աստիճանական չեզոքացման (մասնավորապես, վերաարտահանման գործոնի չեզոքացման և ՌԴ-ից զբոսաշրջիկների հոսքերի կայունացման) պայմաններում, ընթացիկ հաշվի պակասուրդը կխորանա՝ մոտենալով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին:**

Ըստ Ծրագրի (որը կազմված է ընդգծված, սակայն ոչ բավարար չափով **հիմնավորված** լավատեսությամբ)՝ վերջին տարիներին ՀՀ տնտեսական աճի ներուժը նախկին 4-4.5% գնահատված միջակայքից աճել է՝ հասնելով 5-5.5% միջակայքի: **Ծրագրում նաև նշվում է, որ չնայած այն հանգամանքին, որ 2021-2026թթ. տնտեսական աճը միջինում կգերազանցի կառավարության նպատակադրած 7% տնտեսական աճի ցուցանիշը, այնուամենայնիվ, միջնաժամկետում նշված ներուժային աճը պահպանելու և ավելի բարձր կայուն աճի հասնելու համար անհրաժեշտ են տնտեսական աճի ներուժի բարձրացմանն ուղղված լրացուցիչ ջանքեր:** Ակնկալվում է, որ նշված թիրախին հասնելու համար ապագա տարիներին ՀՀ տնտեսությունը կզարգանա առաջարկի վրա հիմնված տնտեսական աճի մոդելով, որտեղ տնտեսական աճի առանցքային շարժիչը պետք է լինի արտահանելի հատվածը և արտահանումը: Նշվում է, որ բարձր տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է արտահանման (առանց վերաարտահանման ազդեցության) տարեկան միջինում 13.2% աճ (իսկ ՄԺԾ-ով կանխատեսվում է միջինում շուրջ 5%), ինչի արդյունքում 2027 թվականին արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2023թ. համեմատ կբարելավվի 11.3 տոկոսային կետով: Ըստ Ծրագրի՝ միջնաժամկետում տնտեսական աճի ներուժի բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ ներդրումային քաղաքականություն, մասնավորապես՝ անհրաժեշտ է ապահովել հիմնական միջոցներում մասնավոր ներդրումների տարեկան միջինում 12.6% իրական աճ (ՄԺԾ-ով կանխատեսված միջինում շուրջ 7% աճի դիմաց): Այդ պարագայում, հիմնական միջոցների կշիռը ՀՆԱ-ում 2027 թվականին 2023թ. համեմատ կաճի շուրջ 4.2 տոկոսային կետով:

Ուշագրավ է, որ այս անգամ էլ միջազգային տարբեր կառույցները ՀՀ տնտեսական աճի կանխատեսման առումով չեն կիսում կառավարության լավատեսությունը: Մասնավորապես, օրինակ, Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) 2025թ. կանխատեսում է 5.3, իսկ 2026 և 2027 թվականների համար՝ 4.5-ական տոկոս տնտեսական աճ: Համաշխարհային բանկի (ՀԲ)

կանխատեսմամբ ՀՀ տնտեսական աճի տեմպը 2025-ին կկազմի 4.9, իսկ 2026-ին՝ 4.5%:

Գծապատկեր 1. Տնտեսական աճի կանխատեսումների համեմատականը, %



Ի դեպ, Ծրագիրը չի բացառում նաև տնտեսության բացասական զարգացումների հնարավորությունը: Մասնավորապես, տնտեսական աճի ռիսկերի նյութականացման սցենարով ենթադրվում է 2022-2023թթ. ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում առաջացած դրական շոկի աստիճանական շրջադարձ, որի արդյունքում տնտեսական աճի տեմպերը դանդաղում են 2024-ին՝ մինչև 3.5%, իսկ 2025-ին՝ 2.4%, որից հետո սկսում են աստիճանաբար արագանալ՝ 2026-ին կազմելով 3.3%, իսկ 2027-ին՝ 3.9%: **Ընդ որում, համաձայն Ծրագրի** («Մակրոտնտեսական կանխատեսումների ռիսկերը» ենթագլուխ, էջ 40)՝ **զարգացման այն սցենարը, որի դեպքում 2024թ. և առաջիկա երեք տարիներին տնտեսական աճի տեմպը գտնվելու է 3-5% միջակայքում, ընդամենը 0.01-0.02-ով է զիջում առավել հավանական՝ 5-7% միջակայքում տնտեսական աճի տեմպ ակնկալվող սցենարին, որի հիման վրա կազմվել է ՄԺԾԾ-ն:**


3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ³

Համաձայն ՄԺԾ ծրագրի՝ 2025-2027թթ. միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության նպատակներն են՝ ՀՀ անվտանգության ամրապնդումը, տնտեսական ենթակառուցվածքների զարգացումն ու հասանելիության բարձրացումը, մարդկային կապիտալի զարգացումը:

Ծրագրում նշվում է, որ միջնաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի կառուցվածքային բարեփոխումների սահուն ընթացքի երաշխավորմանը և ֆիզիկական ու մարդկային կապիտալում ներդրումների մակարդակի էական բարձրացման միջոցով տնտեսության դիմակայունության ամրապնդմանն ու աճի ներուժի բարձրացմանը:

Նախատեսվում է, որ **պետական բյուջեի եկամուտները**, առաջիկա երեք տարիներին աճելով միջին հաշվով տարեկան 11.1%-ով, 2027 թվականին կհասնեն 3,614.3 մլրդ դրամի կամ ՀՆԱ-ի նկատմամբ 26.8%-ի: Գծապատկեր 2-ը ներկայացնում է պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների համեմատականը:

Գծապատկեր 2. Պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում



³ 2025-2027թթ. ՄԺԾ ծրագրում համադրելիության նպատակով նախորդ տարիների կանխատեսումներում պետական բյուջեի եկամուտների և ծախսերի կազմում ներառվել է հիպոթեզային վարկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ ինչպես կանխատեսվող, այնպես էլ համեմատվող ժամանակահատվածների ցուցանիշների համար: Միաժամանակ, 2024-2026թթ. ՄԺԾ և 2024թ. պետական բյուջեի ցուցանիշները ճշգրտվել են պահուստային ֆոնդի չափով, բացի այդ՝ փաստացի ցուցանիշները, 2023-2025թթ. և 2024-2026թթ. ՄԺԾ-ները և 2023թ. պետական բյուջեի ցուցանիշները ճշգրտվել են ԼՂՀ զուտ վարկավորման չափով:

2024-ին հարկային վարչարարության բարելավման և օրենսդրության փոփոխությունների արդյունքում ակնկալվում է, որ հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կբարելավվեն շուրջ 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 24.4%: **Ծրագրում չի նշվում, որ դրանում նշված՝ հարկային եկամուտների 2024թ. համար սպասվող մեծությունը՝ 2,496.9 մլրդ դրամ, 4.5%-ով կամ 116.7 մլրդ դրամով ցածր է 2024թ. պետական բյուջեով պլանավորված մեծությունից՝ 2,613.6 մլրդ դրամից:**

2024թ. հունվար-մայիս ամիսների արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1,029.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 7.7%-ով, իսկ հարկերը և տուրքերը կազմել են 984.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 7.9%-ով: Կատարված մեթոդաբանական փոփոխության համաձայն՝ 2024 թվականից պետական բյուջեի եկամուտներում 2024-ից ներառվում են նաև հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի գումարները (նախկինում դրանք նվազեցվում էին եկամտային հարկից): Այդ գումարները նախորդ տարվա ցուցանիշներում ևս ներառելու պարագայում ընդհանուր և հարկային եկամուտների աճերը կկազմեն համապատասխանաբար 5.4% և 5.1%:


Նկատելի է, որ նախորդ տարվա համեմատությամբ հարկային եկամուտների աճի տեմպը դանդաղել է, ինչը պայմանավորված է հարկման բազաների՝ մասնավորապես հարկունակ սպառման, ներմուծման և կազմակերպությունների շահույթների աճի տեմպերի որոշակի դանդաղմամբ:

Ծրագրին բնորոշ ընդհանուր լավատեսությունը բավական ընդգծված կերպով դրսևորվում է բյուջեի եկամուտների հավաքագրման կանխատեսման առումով: Մասնավորապես, չնայած 2024թ. հինգ ամիսներին արձանագրված դանդաղմանը, Ծրագրով ակնկալվում է, որ հարկային վարչարարության բարելավման, ստվերի դեմ պայքարի, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների շնորհիվ միջնաժամկետում հնարավոր կլինի ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շարունակական բարելավում՝ տարեկան միջինում 0.6 տոկոսային կետով՝ 2027թ. հասցնելով 26.2%-ի: **Մինչդեռ տարբեր երկրների ու ժամանակահատվածների փորձը ցույց է տվել, որ նման տեմպերով շարունակական բարելավում սովորաբար հնարավոր չի լինում ապահովել: Ավելին, ներկայիս միտումների պահպանման պարագայում առավել հավանական է այդ ցուցանիշի նվազումը:** Ընդ որում, ակնկալվում է, որ հարկային եկամուտների բարելավումը կապահովվի բոլոր հիմնական հարկատեսակների գծով: Ենթադրվում է, որ միջնաժամկետում «հարկեր/ՀՆԱ» ցուցանիշի յուրաքանչյուր տարվա բարելավմանը հարկային վարչարարության նպաստումը

կկազմի 0.5, իսկ հարկային քաղաքականության բարեփոխումներին՝ 0.25 տոկոսային կետ:

Հարկ է նշել, որ 2024 թվականին և հետագա տարիներին «հարկեր/ՀՆԱ» ցուցանիշի բարելավմանը զգալի չափով «նպաստելու է» նաև վերոհիշյալ մեթոդաբանական փոփոխությունը: Այդ փոփոխությունը հաշվի առնելով վերահաշվարկ կատարելու դեպքում, օրինակ, 2023թ. «հարկեր/ՀՆԱ» ցուցանիշն ավելանում է 0.5 տոկոսային կետով՝ 23.4%-ի փոխարեն կազմելով 23.9%:


Գծապատկեր 3. Հարկային եկամուտների կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում



Ծրագրում նշվում է, որ 2024թ. հինգ ամիսներին պետական բյուջեի ծախսերի մասով արձանագրվել է թերակատարում:

Ակնկալվում է, որ ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի տեսակարար կշիռը 2024-ին կավելանա շուրջ 3.2 տոկոսային կետով՝ կազմելով 30.5% (Գծապատկեր 4): Նշված 3.2 տոկոսային կետով աճը գրեթե հավասարապես (մոտավորապես 1.6-ական տոկոսային կետով) պայմանավորված է ընթացիկ և կապիտալ ծախսերի աճով: Ծախսերի ծավալը նախորդ տարվա համեմատ կաճի շուրջ 19.9%-ով՝ կազմելով 3,117.6 մլրդ դրամ:


Գծապատկեր 4. Պետական բյուջեի ծախսերի կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում



Ի դեպ, 2025-2027թթ. ՄժԾԾ-ում նվազագույն աշխատավարձի և կենսաթոշակի բարձրացման մասին չի խոսվում: Իսկ առաջիկա երեք տարիներին դրանց փաստացի չբարձրանալու դեպքում, հիմք ընդունելով այդ տարիներին 12-ամսյա գնաճի վերաբերյալ Ծրագրի կանխատեսումը՝ 2024թ.՝ 3%, իսկ 2025-2027թթ.՝ տարեկան միջինը 4%, կստացվի, որ դրանց գնողունակությունը 2027-ի վերջում 2024-ի տարեկազրի համեմատ շուրջ 16%-ով ցածր է լինելու $[100 \times (1 + 0.03) \times (1 + 0.04) \times (1 + 0.04) \times (1 + 0.04) - 100 \approx 15.9]$:

Ակնկալվում է, որ ընթացիկ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2025թ. կկազմի 24.4%, ապա կկայունանա 23.9% մակարդակում: Կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2025թ. կկազմի 7.0%, 2026-ին՝ 7.1%, 2027-ին՝ 6.4% (Գծապատկեր 5):


Գծապատկեր 5. Պետական բյուջեի ընթացիկ և կապիտալ ծախսերի կանխատեսումների համեմատականը, % ՀՆԱ-ում



Ակնկալվում է, որ 2024 թվականին, ընթացիկ և կապիտալ ծախսերի ավելացման հաշվին, պետական **բյուջեի պակասուրդը** կաճի և կկազմի ՀՆԱ-ի 4.7%-ը: Նշվում է, որ, քանի որ կառուցվածքային բարեփոխումների սահուն


ընթացքի երաշխավորմանը և տնտեսության դիմակայունության ամրապնդմանն ու աճի ներուժի բարձրացմանը միտված միջոցառումների մեծ մասն իրականացվելու է միջնաժամկետի սկզբում ավելի մեծ ռեսուրսների ձևավորման ճանապարհով, ապա ակնկալվում է, որ դրա արդյունքում բյուջեի պակասուրդը 2025-ին կաճի մինչև 5.5%, իսկ հետագա երկու տարիներին աստիճանաբար կնվազի՝ 2027թ. հասնելով 3.5%-ի:

Գծապատկեր 6. Պետական բյուջեի պակասուրդը, % ՀՆԱ-ում



2025-2027թթ. բյուջեի պակասուրդի՝ վերը շարադրված սպասվող զարգացումների պարագայում **ակնկալվում է, որ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը նախ կաճի, ապա միջնաժամկետի վերջում կկայունանա 55% մակարդակում:** Միջնաժամկետ հատվածում պարտքի բեռի աճին նպաստող հիմնական գործոնները լինելու են պարտքի իրական տոկոսադրույքի աճը և առաջնային պակասուրդը, իսկ տնտեսական աճը պարտքի նվազեցման ուղղությամբ է ներգործելու:

Գծապատկեր 7. Կառավարության պարտքի դինամիկան



Ինչպես երևում է Գծապատկեր 7-ից, **2027թ. վերջում կառավարության պարտքը կկազմի 7.4 տրիլիոն դրամ կամ 2024թ. վերջի համար սպասվող մեծությունից 43.5%-ով ավելի:** Չնայած այս հանգամանքին, ՄԺԾ ծրագրով համարվում է, որ միջնաժամկետում կառավարության պարտքը կայուն և

կառավարելի է: Այնուամենայնիվ, նշվում է, որ պարտքը շարունակում է զգայուն մնալ հատկապես տնտեսական աճի ցնցումների նկատմամբ, պարտքի կառուցվածքը գնահատվում է միջին կամ բարձր խոցելի, իսկ իրականացված տարբեր հետազոտություններն ուրվագծում են էական անորոշություններ: Այս առումով, կարևորվում են առկա անորոշությունների պայմաններում պարտքի բեռի՝ կառավարելիության ապահովումը, հարկաբյուջետային «բարձիկների» անհրաժեշտ մակարդակում պահպանումը, ինչպես նաև պարտքի կառուցվածքի այնպիսի բարելավումը, որը մի կողմից՝ շարունակական բնույթ ունի, մյուս կողմից՝ լրացուցիչ ռիսկեր չի ստեղծում:

Ծրագրում նշվում է, որ կանխատեսվող սպասումների պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ինչպես 2024 թվականին, այնպես էլ միջնաժամկետ հատվածում մոտ կլինի չեզոքի՝ հաշվի առնելով տնտեսական աճի կայունացումը ներուժային մակարդակի շուրջ:

4. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ

Ինչպես ցանկացած կանխատեսում, ՄԺԾԾ-ի հիմքում դրված մակրոտնտեսական և հարկաբյուջետային կանխատեսումները ևս պարունակում են ռիսկեր առ այն, որ փաստացի իրադարձությունները կարող են տարբերվել սպասումներից: Ստորև ներկայացված են Ծրագրում դիտարկված հիմնական ռիսկերը:

1. Մակրոտնտեսական ռիսկեր, որոնք պայմանավորված են.

- ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով առաջացած արտաժին դրական գործոնների չեզոքացմամբ և հոսքերի հետշրջմամբ,
- ՀՀ ապրանքների՝ դեպի ՌԴ արտահանման՝ վերջին տարիներին էապես ընդլայնված ծավալների կրճատմամբ,
- աշխարհաքաղաքական իրավիճակով, այդ թվում՝ տարածաշրջանային ռազմական հակամարտություններով,
- համաշխարհային գնաճի՝ սպասվածից ավելի դանդաղ նվազմամբ,
- զարգացած երկրներում տոկոսադրույքների սպասվածից ավելի բարձրացմամբ, որը մի կողմից՝ կհանգեցնի ՀՀ-ից կապիտալի զուտ արտահոսքի, մյուս կողմից՝ մասնավոր հատվածի և կառավարության արտաքին պարտքի թանկացման,
- հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճի դանդաղմամբ,
- պետական բյուջեի կապիտալ ծախսերի հնարավոր թերակատարմամբ,
- ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում տնտեսական ակտիվության դանդաղմամբ,

- կառավարության կառուցվածքային բարեփոխումների և արտահանման ու ներդրումների խթանմանը միտված քաղաքականության սպասվածից ավելի ցածր արդյունավետությամբ:

2. Հարկաբյուջետային ռիսկեր, որոնք, ի լրումն մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումների, վերաբերում են նաև.

- «հարկեր/ՀՆԱ» ցուցանիշի թիրախավորված բարելավումների ոչ ամբողջական ապահովմանը,
- ՀՀ կառավարության փոխառության հնարավորությունների սահմանափակմանը,
- լրացուցիչ ծախսային կարիքների առաջացմանը,
- ծախսերի թերակատարմանը և ավելի թույլ խթանող ազդակի ձևավորմանը:

Սցենարային վերլուծության միջոցով նշված ռիսկերին տրվել է քանակական արտահայտություն, և դրանց կառավարման համար ձեռնարկվել են համարժեք միջոցառումներ՝ գանձապետական կայունացման հաշվում առնվազն ՀՆԱ-ի 1%-ի չափով «իրացվելիության բարձիկի» ստեղծման ճանապարհով: Առաջացող ռիսկերին դիմագրավելու տեսակետից յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում նախատեսվելու են նաև լրացուցիչ «բարձիկներ» պահուստային ֆոնդերում:

5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Ինչպես արդեն նշվել էր, ՄԺԾԾ-ն արտացոլում է կառավարության՝ առաջիկա երեք տարիների հարկաբյուջետային և ծախսային քաղաքականությունների հիմնական ուղղությունները, նպատակներն ու սկզբունքները: Մասնավորապես, 2025-2027թթ. ՄԺԾԾ-ով ներկայացվում են կառավարության ծրագրով սահմանված հիմնական թիրախների ուղղությամբ այդ տարիների համար նախատեսվող աշխատանքների իրականացումը՝ ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի գծով:

Ընթացիկ ծախսերն ուղղված կլինեն ծառայությունների մատուցման, տրանսֆերտների տրամադրման, ֆինանսավորման ծախսերի իրականացման և հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումներին: Դրանք 2025-2027թթ. կկազմեն ընդհանուր ծախսերի միջին տարեկանի շուրջ 77.9%-ը:

Կապիտալ ծախսերի իրականացման գերակա ուղղություններն ինչպես ենթակառուցվածքային, այնպես էլ սոցիալական և անվտանգության ոլորտներում իրականացվելիք ներդրումներն են: Դպրոցների շինարարության և վերանորոգման ուղղությամբ կապիտալ ծախսեր նախատեսվել են երեք ծրագրով՝

«Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում», «Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր» և «Ապահով դպրոց», որոնց գծով 2025-2027թթ., ընդհանուր առմամբ, նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 288.2, 29.4 և 2.0 մլրդ դրամ:

Ի տարբերություն 2024-2026թթ. ՄԺԾԾ-ի՝ այս տարի ներկայացված ծրագրի հավելվածում նշված է, թե Ծրագրի գործունեության սկզբում և վերջում «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի շրջանակներում քանի նախադպրոցական հաստատություն է ունենալու շինարարական աշխատանքների 100%-անոց ավարտվածության աստիճան: Մինչդեռ, նույն բանն առկա չէ հանրակրթական հաստատությունների մասով:

Ի դեպ, մտահոգիչ է հիշյալ ծրագրի կատարողականը, քանի որ կառավարության գործունեության ծրագրի ավարտին մնացել է 2 տարի, սակայն «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրով անցած ժամանակաշրջանում շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են կառավարության ծրագրով նախատեսված ծավալի ընդամենը 1/4 մասով:

6. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը մշակվել է բավական բարենպաստ տնտեսական միջավայրում, **սակայն արդեն 2024թ. մայիս ամսից տեսանելի են իրավիճակի կտրուկ վատթարացման նշաններ** (գրեթե կրկնակի նվազել է տնտեսական ակտիվության ցուցանիշը, կտրուկ դանդաղել է արդյունաբերության աճը, ոսկերչական գործունեության կտրուկ նվազման արդյունքում դանդաղել են նաև արտահանման և ներմուծման աճի տեմպերը, վատթարացել է ՀՀ այցելած և ՀՀ-ից մեկնած զբոսաշրջիկների թվաքանակի սալդոն, զգալիորեն նվազել են ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված առևտրային և ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումները, վատթարացել է բյուջեի հաշվեկշիռը և այլն): **Այս բացասական միտումների շարունակման պարագայում Ծրագրի իրատեսականության վերաբերյալ մտահոգությունները կխորանան:** Ի դեպ, համաձայն Ծրագրի շրջանակներում իրականացված սցենարային վերլուծության արդյունքների՝ տնտեսական աճի ռիսկերի նյութականացման հոռետեսական սցենարով (որով մասնավորապես ենթադրվում է 2022-2023թթ. ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում առաջացած դրական շոկի աստիճանական շրջադարձ) չի բացառվում, որ տնտեսական աճի տեմպերը

կտրուկ դանդաղեն: Ընդ որում, զարգացման այնպիսի սցենարը, որ միջնաժամկետում տնտեսական աճի տեմպը կազմելու է 3-5%, գրեթե նույնքան հավանական է, որքան հիմնական սցենարը, որի հիման վրա կազմվել է ՄԺԾԾ-ն, և համաձայն որի տնտեսական աճի տեմպը գտնվելու է 5-7% միջակայքում:

Եթե անգամ բացառվի բացասական միտումների հետագա խորացման վտանգը, ներկայացված միջնաժամկետ ծախսերի ծրագիրն արդեն իսկ առաջացնում է որոշ մտահոգություններ, որոնցից առավել ակնառուները հետևյալներն են.

- Ծրագրով առաջիկա երեք տարիներին նվազագույն աշխատավարձի և կենսաթոշակի բարձրացման մասին չի խոսվում: Այսինքն՝ հաշվի առնելով գնաճի կանխատեսվող մեծությունները, ստացվում է, որ չբարձրացման դեպքում դրանք իրական արտահայտությամբ 2027 թվականի վերջում շուրջ 16%-ով պակաս կլինեն 2024-ի տարեսկզբի համեմատ:

- Պետական բյուջեի հարկային եկամուտների ընթացիկ հավաքագրումներն էապես նվազել են, իսկ 2025-2027թթ. ՄԺԾ ծրագրում դրանց՝ 2024թ. համար սպասվող մեծությունը՝ 2,496.9 մլրդ դրամ, 4.5%-ով կամ 116.7 մլրդ դրամով ցածր է 2024թ. պետական բյուջեով պլանավորված մեծությունից:

- Հարկային եկամուտների կանխատեսումներում շարունակվում է «հարկեր/ՀՆԱ» ցուցանիշի ագրեսիվ աճի սցենարը: Մինչդեռ տարբեր երկրների ու ժամանակաշրջանների փորձը ցույց է տվել, որ նման տեմպերով շարունակական բարելավում սովորաբար հնարավոր չի լինում ապահովել: Ավելին, ներկայիս միտումների պահպանման պարագայում առավել հավանական է այդ ցուցանիշի նվազումը, չնայած 2024 թվականին և հետագա տարիներին այդ ցուցանիշի բարելավմանը զգալի չափով «նպաստելու է» կատարված մեթոդաբանական փոփոխությունը, համաձայն որի պետական բյուջեի եկամուտներում 2024-ից ներառվում են նաև հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի գումարները:

- Կառավարության պարտքը կտրուկ աճելու է: Ծրագրով նախատեսվում է, որ 2027թ. վերջում կառավարության պարտքը կկազմի 7.4 տրիլիոն դրամ կամ 2024թ. վերջի համար սպասվող մեծությունից՝ շուրջ 5.2 տրիլիոն դրամից 43.5%-ով ավելի: Իսկ ՀՆԱ-ում կառավարության պարտքի կշիռը 2026 և 2027 թվականներին կկազմի 55%՝ 2024թ. համեմատ ավելանալով 4.5 տոկոսային կետով:

• **2025-2027թթ. ՄԺԾԾ-ով մի շարք միջոցառումներ ներկայացվել են առանց հստակ չափելի արդյունքային ցուցանիշների:** Ծրագրում բազմաթիվ են «հոչակագրային» բնույթի մտքերը («կբարելավվի», «կապահովվի», «կներդրվի», «կմշակվի», «կշարունակվի», «կընդլայնվի» ոճի), սակայն, դրանց զգալի մասի հետ կապված որևէ քանակական չափելի թիրախ ըստ տարիների չի ներկայացվում: Օրինակ՝ «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի գծով արդյունքային ցուցանիշ նշված է միայն նախադպրոցական հաստատությունների մասով: Ընդ որում, **չնայած կառավարության գործունեության ծրագրի ավարտին մնացել է 2 տարի, սակայն «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրով անցած ժամանակաշրջանում շինարարական աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են կառավարության ծրագրով նախատեսված ծավալի ընդամենը 1/4 մասով:**

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: